


ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄԵԼԿ“

ԿՐԵԱՆՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր սեփական ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

«ՄԵԼԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսեկանը 6 ռուբլ:

Գրվել «ՄԵԼԿ» կարելի է ԽՐԱՔԱՆՉԻՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում Թամարայի տանը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄԵԼԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МЕЛКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԳԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ՍԵՐԳԵՅ ԻՍԱԿՎԻԶ ԱՄԻՐԵԱՆ, ԵՂԻՍԱԲԵԹ ԻՍԱԿՎԵԱՆ և ԵԳՈՐ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՆԵՐԸ խորին ցաւով յայտնելով առաջինները իրանց եղբոր, իսկ վերջինը իր անեղբոր՝ ԵԳՈՐ ԻՍԱԿՎԻԶ ԱՄԻՐԵԱՆԻ՝ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ լինել յուզարկաւորութեանը, շաբաթ օր, հոկտեմբերի 22-ին, առաւօտեան 10 ժամին, որը տեղի կունենայ իր սեփական տանը, Արտաքաղաքական Հրատարակի վրա, դէպի Մոսկուս. Գեորգ եկեղեցին: Իսկ ուրբաթ օր, ամսիս 21-ին, երեկոյեան 6 ժամին կը լինի հոգեհանգիստ: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցի և դպրոց.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խնամքի արարքները. Տեղեկութիւններ Թիւրքիայից և Թիւրքաց շայտատանից. Ուտտաի լուրեր.—ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. [Անարկներ.

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԴՊՐՈՑ

Հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսը լաւ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

O tempora, o mores

Սոցիալօգիան այն կարծիքն է յայտնում, որ հասարակական ասպարէզը մի գեղեցիկ դպրոց է թէ ժամանակակից մտքերը մշակելու և թէ նոյն իսկ մատաղ սերնդի դարձագրման համար: Հասարակական գործիչներն էլ կարող են լինել ամենալաւ վարժապետներ ժողովրդի համար, և հասարակական գործունէութեան ասպարէզը կարող է օրինակ դառնալով տարածել անձնակրթութեան և ազնիւ գործունէութեան գաղափարները: Այդ անուայման ճիշդ է: Բայց տարաբարդաբար այդ ճանապարհները խախտված է թէ մեր հասարակական գործիչների և թէ մեր մամուլի շրջանում:

Մեր մամուլը չունի այդ նշանակութիւնը հասարակութեան աչքում,—և դրա պատճառը այն տեսակ երևոյթներն են, որոնք սովորական բնավորութիւն են ստացել մեր մամուլի մէջ: Հասարակութիւնը կասկածում է հասարակական կարծիքի զեկաւարճների անկեղծութեան մասին, և հեղուկութեամբ նայում է շատ հասարակական գործիչների խօսքերի վրա, որոնք հրապարակ են դուրս գալիս և ասում են թէ «մենք մեր ոյժերը նուրբ ենք աղդի ծառայութեան»:

Ընչ աղդ, ինչ հասարակական գործունէութիւն,—բացականչում է չարամտութեամբ ընթերցող հասարակութիւնը, «այսպէս ստոյններ և

ըմբռնելով հայոց եկեղեցու ժողովրդական, ընտրողական սկզբունքը, լաւ ըմբռնել էր և այդ եկեղեցու ոգին և համեմատ այդ ոգու՝ շնորհել էր և հայոց դպրոցական կազմակերպութեանը, որը անբաժան է եկեղեցուց, մի որոշ ինքնավարութիւն: Այն օրից ի վեր հայոց դպրոցը վայելում է մինչև այժմ Մատթէոսից շնորհված ինքնավարութիւնը:

Գործել այդ ինքնավարութեան դէմ, ինչպէս այդ անում է «Արձազանքը» իր ուսուցիչական արբանեակներով, նշանա-

այդպէս գործները իրանց շահի և իրանց փառքի համար են գործում:

Պատճառն այն է, որ այդ նոյն տղէտ հասարակութիւնը, որ պատրաստ էր ամեն բան հալած իւրի տեղ ընդունել, տարիներ ընթացքում տեսնելով մի շարք դիմակաւորված եւսամոլներին, որոնք դեր են կատարում հասարակական ասպարէզի վրա, մի կողմից մեծ մեծ խօսքով, միւս կողմից իրանց մի մաղից անգամ չեն ուզում զրկվել այդ նոյն հասարակութեան օգուտին, նա, այդ ժողովուրդը միակեց կասկածել այդ գործիչների անկեղծութեան մասին, այդ կասկածին յաջորդեց արհամարհանքը, և այսօր մենք ամենքս վրայ ենք, թէ ինչպէս մի տղէտ, անկիրթ հասարակութիւն, որը հազիւ կարողանում է չարք բարիք ճիշդել, այն տեղն է հասել, որ ամբողջ սրտից արհամարհում է հասարակական գործունէութիւն և մամուլը և նրա յայտնած այս կամ այն միտքը:

«Մի կաթիլ թոյնը փչացնում է մի ամբողջ աման քութիւն».—ասած է և շատ ճիշդ է ասած:

Մի քանի կեղծաւոր մարդիկ, մի քանի անպիտան օրգաններ, և անա ստուեր է ընկնում նոյն իսկ ամբողջ գաղափարի, ամբողջ մամուլի վրա, քանի որ տղէտ հասարակութիւնը, ինչպէս միշտ, դիմե մասնաւոր դէպքեր ընդհանրացնել:

Կարելի է լրագրութեան մէջ որ և է խիստ յօրուած, կամ յարձակումները այս կամ այն անձնավորութեան վրա, մեր հասարակութիւնը սարսափելի նեղամտութեամբ բացականչում է. «Ի՞նչ դիմե էլ ինչ թշնամութիւն ունի խմբագիրը», կամ թէ կարելի է գովասանք մի որ և է մարդու գործունէութեան մասին, նոյն հասարակութիւնը նկատում է.—«տեսնա ինչով է քաղցրացնել խմբագրի բերանը»:

կում է չը հասկանալ որ մեր դպրոցական ինքնավարութիւնը, ժողովրդից ընտրված իր հոգաբարձուներով, իր կանօնադրութեամբ, որը հիմնված է ապակենտրոնութեան որոշ սկզբունքների վրա,—ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոգիական հետեանք եկեղեցու ժողովրդական կազմակերպութեան: Կամ պէտք է ընդունել որ այդ պարունակը շատ լաւ են հասկանում այդ բոլորը, բայց ջանալով քանդել այդ ինքնավարութիւնը, անձնական նպատակներին զոհում են ընդհանրութեան օգուտը:

Եւ ճշմարիտ տարօրինակ տեսարան է ներկայացնում մեզ այդ հարցի մասին բանախօսը: Գերմանական համալսարանների նախկին ուսանողները, ինչպէս Աբգար Յովհաննիսեան և Աւետիս Արասխանեան, որոնք Գերմանիա եղած ժամանակ, ի հարկէ, հիանում էին գերմանական դպրոցական կազմակերպութեան ինքնավարութեան մասին,—այժմ քարոզում են մեր դպրոցների վերաբերմամբ ինքնավարութեան ոչնչացնելը, և հակառակ հանգուցեալ և անմոռանալի Մատթէոս կաթողիկոսի շնորհված իրաւունքների՝ քարոզում են ամբողջ դպրոցական իրաւասութեան անպայման կենտրոնացնելը բարձր հոգեւոր իշխանութեան ձեռքում:

Անկասկած նրանք սկզբունքով համակրում էին մեզ մօտ մի որ և է Ներսիսեան դպրոցի, թէև ողորմելի ինքնավարութեանը: Բայց հէնց որ խնդիրն անցաւ անձնական շահերի, հէնց որ նոյն Յովհաննիսեանին հարկաւորվեցաւ Բեզնաւարեան քահանային տեսչութիւնից հեռանալը, հէնց որ Ներսիսեանի համար, թէ ինքն հեռացած է Ներսիսեան դպրոցի ուսուցչութիւնից,—անմիջապէս այդ երկուսի գլխներում մոռացվեցան բոլոր երկուստարակալ իդէալները, գոլորշիացան նրանց գլխներից նախկին գերմանական ուսանողների համակրելի յիշատակները և

Իսկ երբ մամուլը սկսում է արդարացի դալարով յարձակվել այս կամ այն մարդու վերջինների վրա, մեղադրում է սրան կամ նրան դիցուք, հասարակական փողեր ուտելու և այլն, մեր հասարակութիւնը ամենայն յանդգնութեամբ նկատում է. «Ինչ են ուրիշի մասին խօսում, երբ խմբագիրներն էլ հասարակական փողեր են ուտում»:

Երբ մամուլը անձնավարութիւնից դուրս ոչինչ չէ տեսնում, երբ լրագիրը՝ այսօր մէկին շողորմելով, վաղը սկսում է նոյն մարդուն հալածել, որովհետեւ խմբագրի անձնական յարաբերութիւնները փոխվում են, երբ գաղափարի և ուղղութեան համեմատութեան փոխարէն նոյն իսկ մամուլի մէջ բարեկամութիւնը հիմնվում է «անձնական բարեկամութեան» վրա, և երբ վերջապէս, հասարակութիւնը այն կարծիքի է գալիս, որ այս կամ այն գործիչի, նոյն իսկ խմբագրի ամբողջ գործունէութեան հիմքը նրա «անձնական» ձգտումներն են,—այն ժամանակ, ի հարկէ, այդ հասարակութեան աչքում թէ մամուլը, թէ այդ տեսակ գործիչը միմիայն անբարոյականացնող աղղեցութիւն կունենան և ուրիշ ոչինչ...:

Մի քանի օրինակ բերենք: Արամից մի քանի ժամանակ առաջ պ. Յովհաննիսեան իր օրգանում մի շարք յօդուածներ գրեց վաճառականների դէմ «Հայոց աղքի կատաղի թշնամի» վերնադրով: Հասարակութիւնը կարգադրեց այդ և փոխանակ յօդուածների բովանդակութեան մասին մեծ տանջուք, սկսեց այդ յօդուածների գրելու պատճառները որոնել:

Մի ուրիշ օրինակ.

«Արձազանքը» սրանից մի քանի ժամանակ առաջ ջնջեց կերպով սկսեց պաշտպանել Գամուշին եկեղեցու երեցիօխին, ներքոնք կարգա-

նրանք առանց ամաչելու, սկսեցին քարոզել մեզ մօտ ամենախաւար և մի և նոյն ժամանակ փնասակար մտքեր,—այն է մեր յիշեալ խնդրի կաթողիկոսից մեզ շնորհված դպրոցական ինքնավարութեան թէև դեռ ևս շատ թոյլ սկզբունքի ոչնչացնելը:

Չարաչար սխալվում էք դուք, պարոններ ֆրագեօրներ և անձնական շահերի համար ընդհանուր օգուտէտ սկզբունք ունակոյն անողներ, սխալվում էք դուք պնդելով որ հայոց եկեղեցու ամբողջ ոյժը հոգեւոր պետի անպայման իշխանութեան մէջն է, սխալվում էք քարոզելով ծխական ինքնավարութեան և դպրոցական ինքնավարութեան խախտումը, սխալվում էք հրատարակելով թէ ծովսի տէրը և դպրոցի տէրը՝ ժողովուրդը, ընտրողները և հոգաբարձուները չեն, այլ միմիայն հոգեւոր պետի անձնավարութիւնն է: Ինչքան հոգեւոր պետ իր զոյնութեամբ ժողովրդական, ընտրողական սկզբունքին է պարտական, ինչքան հոգեւոր պետ ժողովրդից ընտրված և կայսրից հաստատված լինելուց յետոյ, կաթողիկոս օծվելու ժամանակ նախ որպէս ուսուսհայտատի երգչում է հաւատարմութիւն կապիկան, ապա գրեհատարվելով և բարձրանալով սեղանը, որպէս հոգեւոր պետ՝ երգչում է հաւատարմութիւն հայոց եկեղեցու սահմանադրութեան:

Եւ կաթողիկոսի ամբողջ ոյժը իր անսխալական անձին մէջ չէ, ինչպէս Հռօմի պապի ոյժը, այլ նրա ոյժը ժողովրդական սկզբունքի մէջ է: Եւ հայոց կաթողիկոսները միշտ աւելի զօրեղ էին լինում միմիայն այն ժամանակ, երբ մեր եկեղեցու ժողովրդայնացումը հայապարհի մեջ ընդհակառակն աւելի անգոր էին հանդիսանում: Երբ փորձում էին անտես առնել ժողովրդական սկզբունքը, երբ մեր եկեղեցուն յատուկ ապակենտրոնական սկզբունքին չը հետեւելով, ձգտում էին ամեն ժողովրդական իրաւունքները կենտրոնացնել

լով նրա ազնուութեան և անշահասիրութեան մասին: Հասարակութիւնը փոխանակ մտնելու «Արձազանքի» դրածների խմատի մէջ, փոխանակ դատելու դրածները, սկսեց օրհնել. «Ինչ է պատճառը, որ պ. Աբգար Յովհաննիսեան այդ երեցիօխին այդքան գոռում է: Կրկնում ենք, դրա մէջ հասարակութիւնը մեղաւոր չէ. նա շատ դէպքեր է տեսել, և այդ դէպքերից այն եզրակացութիւնն է դուրս բերել, որ նոյն իսկ մամուլի մէջ շատ բան խմբագիրների «անձնականի» հետ կապ ունի»:

Մենք մի քանի, շատ նոր, օրինակներ կը բերենք թէ ինչու հասարակութիւնը տարիներ ընթացքում այդպէս է մտածում:

Վերջին ժամանակներս պ. Յովհաննիսեան ըսկսել է ամեն կերպ հալածել Ներսիսեան դպրոցի տեսուչ Բեզնաւարեան քահանային թէ մի. Յովհաննիսեանի այդ թշնամութեան հիմքը լինէր այն, որ նա համոզված է թէ Բեզնաւարեան անօգուտ տեսուչ է Ներսիսեան դպրոցի համար, այն ժամանակ մենք ամենքս յարգանքով կը վերաբերվէինք դէպի մի մարդ, որը անում է այն, ինչ որ թելադրում է իր համոզմունքը: Բայց բանը նրանումն է, որ, որքան էլ մարդ օպտիմիստ լինի, այնու ամենայնիւ չէ կարողանում աչքերը փակել կենդանի ապագայից: Բեզնաւարեանի տեսչութեան կողմնակից էր և պ. Աբգար Յովհաննիսեան: «Արձազանքը» գովասանքներ էր տպում Բեզնաւարեանի մասին, երբ նա տեսուչ էր Ներսիսեան թեմական դպրոցում: Բեզնաւարեան դպրոցում, դարձաւ և «Արձազանքի» աշխատակից, և իբրեւ պ. Յովհաննիսեանի չլաւ բարե-

իրանց ձեռքում, ձգտում էին մեր դարևոր եկեղեցու ողորմ և բնաւորութեանը հակառակ կենսաբանականութեանը:

Հայոց եկեղեցին պապականութիւնն է, հայոց կաթողիկոսը անսխալական Հռոմի պապը է,—այլ նա ժողովրդական, բնաւորական հոգեւոր իշխան է: Եւ նրա ոյժը նոյն իսկ ժողովրդական սկզբունքի մէջն է, որի վրա նա պէտք է հիմնվի իր իւրաքանչիւր արած քայլում, որին նա պէտք է յարգէ՝ ինքն ոյժ և նշանակութիւն ստանալու համար:

Դիմեցէք հայոց եկեղեցական պատմութեանը և կը համոզվէք, որ մենք ենք միշտ եղել և ենք հայոց եկեղեցու դարևոր անսխալութիւնները, ողորմ, կազմակերպութեան և բնաւորութեան պաշտպաններ, և ոչ թէ դուք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուսւմ ենք, որ թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակէս սրբազանը, ներկայացնելով վեհա-
փառ Կաթողիկոսին հրաժարական իր պաշտօնից, որի մասին անցեալ անգամ հաղորդեցինք, մի և նոյն ժամանակ խնդրել է նշանակել իրան յորմի Ս. Խաչ վանքի վանահայր Անկասկած, Արիստակէս եպիսկոպոսը այդ հեռաւոր վանքում առանձնանալ և հանգստանալ է ուզում:

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են: «Մեր ուսումնա-
րաններում կանոնաւոր դաստաւութիւնը դեռ չէ սկսվել, պատճառն այն է, որ հողաբարձների և ուսուցիչների մէջ տեղի են ունենում անընդ-
հատ երկպառակութիւններ: Հողաբարձները ուսուցիչներին բանի տեղ չեն դնում, իսկ այդ վերջիններն ինքնասիրութիւնը վերաւորված է հողաբարձների վարմունքից: Մեզ մօտ, առհա-
սարակ, դոք չիմեն շատ դժուար է, իսկ քանդել եղածը՝ շատ հեշտ է: Մեր օրերդայն դպրոցն էլ բաւարար դրութեան մէջ չէ. աշակերտութիւնների թիւը շատ աննշան է:»

«Մեր քաղաքային վարչութիւնը յայտնել էր մեր-
ցութիւն (կոնկուրս) Բոստօլի պատմութիւնը գը-
րելու համար, որը պէտք է հեղինակվէր հետեւալ վերնագրով. «Историческая записка о городе Ростова на Дону». Ներկայ հոկտեմբերի 12-ին

կամ, Ներսիսեան դպրոցի տեսչական սենեա-
կում նստած սաղաքում էր «Արձագանքը» ան-
դորադիրը և բաժանորդներ հաւաքում և այլն և այլն....

Անցեց, ինչու մինչև այդ ժամանակ Բէգնա-
դարեան և լաւ մանկավարժ էր, և կարողանում էր լաւ կառավարել Ներսիսեան դպրոցը, բայց հէնց որ նա խառնվեց ֆանդիսի եկեղեցու հարցի մէջ, հէնց որ խոյս տուեց ձեռք խմբին պատկանող ազգային բաներից, պաշտպանելով եկեղեցու շահը և ծովի իրաւունքները, դուք,—միանգամայն ձեռք դրեց փոխեցիլ, սկսեցիք հայոցի, ծածկա-
միտ արամաութիւնների անել, և այնտեղ հասաք, որ սկսեցիք հաւատացնել, թէ Բէգնադարեան իր տեղը պնդեցնելու հարցով զբաղված լինելով՝ ժամանակ էլ չունի հաշուել թէ 17+18=35:

«Նպատակը սրբում է միջոցը» մտածեցիք դուք, պ. Գովհաննիսեան, և շարունակեցիք:

Բէգնադարեան վատ և անպէտք դարձաւ այն քաղաքից, երբ ֆանդիսից եկեղեցու երեցփոխի հա-
կառակ կողմը անցաւ, իսկ պ. Աւետիք Արա-
խանեան, որի հետ ձեռք ունեցած թշնամութիւնը, թէ հրապարակական և թէ ոչ հրապարակական կերպով, յայտնի են, որին դուք հալածել և միշտ ծաղրել էք, որը ձեռք անհաշտ հակառակորդն էր յայտնվում միշտ,—յանկարծ լաւ մարդ, լաւ վար-
ժապետ, և գիտնական դարձաւ այն օրից, երբ անցաւ Բէգնադարեանի հակառակ կողմը:

Ում չէ յայտնի, որ հանգուցեալ «Մեղու Հա-
յաստանի» լրագրի և այժմեան «Արձագանք»
շաբաթաթերթի մօտ երի (եթէ կարելի է մըտ-
քել ասել) մէջ համարեա ոչինչ անբարեբա-
նութիւն չը կայ: Բայց ամենքին յայտնի է, որ այդ երկու օրգանները միմեանց միշտ ոչ թէ միայն հակառակ, այլ թէ չնամի են եղել:

վարչութեան նիստում կարգաւորեց այդ մասին կազմված յանձնարարական ժողովի ծանուցումը: Գործից երևաց որ նշանակված են եղել երկու պրէմիա յիշեալ աշխատութեան համար, որոնցից առաջինը 800 ռուբլի, իսկ երկրորդը 200 ռուբլի: Քաղաքային վարչութիւնը որոշեց առա-
ջին պրէմիան յատկացնել պ. Գրիգոր Զալսու-
շեանին և նրա աշխատութիւնը (150 մեծ թեր-
թիւ, 1,200 երես), պահել քաղաքային ընթերցա-
րանում, իբր «Բանագրին յիշատակարան», առ-
այժմ անյարմար գտնելով այդ ձեռագրի տպա-
գրելը, քանի որ դեռ ևս ողջ են այն անձանց մեծ մասը, որոնց վրա խօսվում է յիշեալ գը-
րում:

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են: «Վեպտեմբերի
21-ին, երեկոյեան ժամը 10-ին, երկաթուղու դը-
նացքով հասաւ Արմաւիր թեմի առաջնորդ, սըր-
բազան Գէորգ եպիսկոպոսը: Նա այցելեց տեղիս
երկեսու դպրոցները, իսկ սեպտեմբերի 24-ին,
այսինքն ս. Գէորգի օտնի օրը, սրբազանը պատա-
րագ մատուցեց եկեղեցում և այդու. քարոզ խօսեց:
Այդ օրը, սրբազանի անուանակոչութեան օտնի
էլ լինելով, դպրոցների հողաբարձները, ուսու-
ցիչները և ուսուցչուհիները՝ աշակերտներով և
աշակերտուհիներով, գնացին շնորհաւորելու սըր-
բազանին: Մանկական երգեցիկ խումբը երգե-
րեց և ապա ուսուցչուհի օրերը Մ. Մակա-
րեանց, օրերդայն դպրոցի կողմից իր աշխատած
մի գեղեցիկ գործ մատուցեց եպիսկոպոսին: Միւս
օրը սրբազանը ճանապարհ ընկաւ դէպի Նոր-
Նախիջևան:»

Բօրչալուի գաւառի գրութեան մասին ընդհան-
րապէս ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ հետեւեալն են գրում.
«Այդեքազը Բօրչալուում արդէն վերջացաւ: Երբան
շատ թանկ էր, մանաւանդ այստեղ ու Խաչե-
նում թունդին (10 Փ.) ծախվում էր 65—90 կ.
կասկած չը կայ, որ այսպէս չէր բարձրանայ, և
թէ այդինքն ամեն տեղ լինողը» չը փչանային:
Մեծ քանակութեամբ շերտ գնողների թիւում
թիֆլիսցիներ էլ կային, որոնք երբեք եղած չեն:
Ինչպէս երևում է նոր գինիները շատ լաւ կը լի-
նեն, որովհետեւ չը փչացած խաղողը շատ համեղ
է: Եղալովքի բոլոր այգիներից մօտաւորապէս կը
գոյանայ 50,000 թունդ: Իսկ խաղողի բոժնու
դրամ օրական անհատական այնքան բեռ-
նաւորված էին, որ եթէ չը փչանար, առնուազն
150,000 թունդ կը լինէր: Թանգ է ցորենը և
գարին. ցորենի պուղը արժէ 1 ռ. 10 կ., գարին
70—80 կ.: Անտուր անձրևների պատճառով
հասկերը դատարկ մնացին, իսկ Լուսում ցորենի

Բայց ինչն է՞նդել այդ երկու օրգանների թըշ-
նամութեան պատճառը, եթէ դրանց մտքերի մէջ
տարբերութիւն չը կայ:

Անձնական թշնամութիւնը, կը պատասխա-
նենք մենք: Պ. Արզար Գովհաննիսեան և նախ-
կին «Մեղուի» խմբագիրը ան ձեռք առնալ էս
միմեանց թշնամի էին, և այդ պատճառով թըշ-
նամի էին և նրանց օրգանները:

Մի ուրիշ օրինակ: «Արձագանքը» և Թիֆլի-
սում հրատարակվող մի թերթ (որի անունը ա-
մօթ է համարում յիշել ինքն «Արձագանքը») միմեանց հետ թունդ թշնամի են. այդ էլ հիմն-
ված է երկու հրատարակութիւնների խմբագրի-
ների անձնական թշնամութեան վրա, քանի որ
այդ երկու թերթերի մէջ մտքերի և ուղղութեան
առանձին զանազանութիւն չը կայ:

Ելի մի քանի ուրիշ օրինակներ «Արձագա-
նք» կամ աւելի լաւ է ասել, պ. Գովհաննիսեան
արտաքին չի մարդկանց» ոչինչ չէ տեսնում: Մի
ժամանակ, երբ Բաֆին աշխատակցում էր «Մշա-
կին», «Արձագանքը» և առաջ էլ «Փորձը», նոյն
իսկ չէին յիշատակում Բաֆին լոյս տեսնող աշ-
խատութիւնները, ուր մնաց թէ համակրան-
քով խօսէին նրանց բուհադատութեան մասին:
Ինչու. որովհետեւ Բաֆին աշխատակցում էր
«Մշակին» և ոչ թէ «Արձագանքին»:

Պ. Արզար Գովհաննիսեան հայոցում է ուրիշ
թերթերի աշխատակիցներին, միայն այն պատճա-
ռով, որ նրանք չեն պատկանում իր արբանակ-
ների խմբին, եթէ մենք պատկանէինք մեր զա-
գային խանութի» չողորմեղ խմբին. այն ժամա-
նակ անկասկած մենք պ. Գովհաննիսեանի աշ-
խատ և տաղանդ կունենայինք, և անցեալ և
այս պահի:

Այժմ մեր գրողների նման նոյն իսկ «Արձա-
գանքը» աշխատակից համարվողները շատերը,

մեծ մասը լաւ բերել չէ տուել: Գեղարդաբար
երկրորդ տարին է, որ փչանում են երկրագոր-
ծական աշխատանքները: Մեր գիւղացիների դը-
րութիւնը շատ աննախանձելի է, մանաւանդ
թուրքերին: Թէև վերջին տարիները սրանք էլ
սկսել են երկրագործութեամբ պարագել և, կա-
րելի է ասել, յետ չեն մնում հայերից, բայց այ-
նու ամենայնիւ հոռից մի ամիս չանցած, չը-
վալները ձեռքերին հայերից հաց են խնդրում,
մէկին երկու վճարելով և դրա ղնելով կանանց
զարգերը: Այդ տնտեսական վատ դրութեան
պատճառով էլ սկսել են շատանալ սպանութիւն-
ներն ու կողոպտումները: Անցաւ տարի այս
կողմերում սպանվածների ու վիրաւորվածների
թիւը հասնում էր 200-ի, իսկ այս վերջին երեք
ամիսայ ընթացքում եղած սպանութիւնները այն-
քան շատ են, որ միանգամայն անհաւատալի է
թվում:

Լուսւմ ենք, որ վեհափառ Կաթողիկոսը, ուր-
աթ օր, ամիս 21-ին, պէտք է ուղևորվի Բա-
ղու և վերադարձին՝ պէտք է այցելէ Գանձակ
քաղաքը, իսկ Աղստաֆայից պէտք է դնայ էջ-
միածին: Սեյալ է այն, որ ասում են իբրև թէ
վեհափառ Կաթողիկոսը Բաղուից կրկին Թիֆլիս
պէտք է վերադառնայ: Ուրեմն թէ ֆանդիսից ե-
կեղեցու պատգամաւորութիւնը, թէ Ներսիսեան
դպրոցի հողաբարձութիւնը և թէ ուրիշ պատգա-
մաւորութիւններ բազմ չեն ունենալ ներկայանա-
լու վեհափառին, ինչպէս որ սպասվում էր:

Թիֆլիսում ուսուցիչ ինքուով հրատարակվող
«Тифлисский Листок» լրագիրը թղթաւորութիւն է
ստացել լայնացնելու իր պրօգրամին և մեծաց-
նելու լրագրի բաժանորդագիրն: Տարեկան 3
րուբլու փոխարէն բաժանորդագիրը կը լինի 5
րուբլի, իսկ օտարաքաղաքացիների համար 5
րուբլու փոխարէն 7 րուբլի:

Թիֆլիսի քաղաքային ղեկավարարական ա-
տեանը յայտնում է, որ ներկայ թվի հոկտեմբերի
1-ից սկսում է իր գործողութիւնները 1867 թվի
ծնված երիտասարդների գինուրակայի կնիքա-
րկու համար:

ՎԵՍԷՆԱՆ ԼՈՒՐԵՐ
գիւղում, ինչպէս մեզ գրում են այնտեղից, մի
թուրք կին ծնել է 3 երեխայ, և երեքն էլ ա-
ռողջ են:

Պետական կալուածների միւնիստրութիւնը, տե-
ղեկութիւններ հաղորդելով Ռուսաստանի այս

օրինակ, պ. Պառչեան, պ. Պատկանեան, Բարխու-
դարեան, կամ «Աղբիւրի» աշխատակից պ. Աղա-
յեան և ուրիշները չեն պատկանում «Մշակի»
բանակին. կան և այնպիսիներն էլ, որոնք պ.
Գրիգոր Արծրունու հետ անձնական հակառակու-
թիւն ունեն: Այդ ուրիշներն են ինչ կը լինէր,
եթէ «Մշակը» հայոցից դրանց, վերաւորել դրանց
անձը, և յայտնել, որ դրանք բոլորն էլ տգէտ
են, թերուս են, և այլն, միայն այն պատճա-
ռով, որ «Մշակի» խմբագրի կողմնակիցները չեն:
Տարաքաղաքար արդէս են անում մեր մա-
մուլի դաւադան օրգանները, «Արձագանքից»
սկսած:

Գարձակվել, նոյն իսկ խտութեամբ հասա-
րակական գործեր կատարող մարդկանց ա-
րարքների վրա, մենք հասկանում ենք, բայց հայ-
հոյի սրան նրան, որովհետեւ դրանք անձնական
բարեկամներ չեն խմբագրին, և վաղը գովաբա-
նել նոյն մարդկանց, որովհետեւ նրանք դարձան
խմբագրի անձնական բարեկամները,—խոստովա-
նում ենք, դա կատարեալ խայտառակութիւն է:

Այդ մի քանի օրինակներից էլ կարծում ենք,
պարզ երևում է, որ այդ տեսակ մամուլի մէջ չէ
էլ կարող լինել զաղափարի ու մտքի վրա հիմն-
ված կուսակցութիւն, չէ կարող լինել մտքի, գա-
ղափարի և ուղղութեան ընդհարումներ, որոնք
առաջ են բերում այն, ինչ որ սովորաբար լրա-
գրութեան մէջ կոչվում է պոլեմիկա, բանակիւս
Այդ պատճառով մեր լրագրութեան մէջ բանա-
կուր, այս բառի լայն մտքով, համարեա թէ չէ
լինում: Երբ «Մշակը» ներկայ պայմաններում
այս կամ այն հնարաւոր մտքեր է յայտնում, շատ
քիչ է պատահում, որ մեր լրագրութեան միւս
օրգանները մի կանոնաւոր զիմադրութիւն ցոյց
տային, թէ ևս սովորաբար, ծուռ ու մուռ ճանա-
պարհներով, ողորմելի եղեւջներով, ցոյց են տալիս

տարվայ հոռի մասին, յայտնում է որ դա
միջակից աւելի լաւ է եղել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ԱՐՄԱՐԿԵՐԸ

Ֆրիդրիխ երրորդի մահուանից յետոյ՝ իշխան
Բիսմարկ, գերմանական պահպանողական կու-
սակցութեան այժմեան այդ դրեզ պարագուրը՝
ամեն դէպքից օգուտ է քաղում ստուեր գեղու-
հանդուցեալ կայսրի վրա: Այդպիսի դէպքերից
մէկն էլ Ֆրիդրիխ յիշատակարանի առաջ բերած
աղմուկն է, որի առիթով իշխան Բիսմարկ, այս-
պէս թէ այնպէս, աշխատում է սկսեցնել Ֆրիդ-
րիխի վարմունքները, արդարացնելու համար ի-
րան այն մեղադրանքներից, որոնք արտայայտ-
ված են նրա քաղաքականութեան դէմ այդ նշա-
նաւոր յիշատակարանում:

Իշխան Բիսմարկ իր օրգանի «Norddeutsche
Allgemeine Zeitung»-ի միջոցով, իբր թէ բանա-
կուրելով ազատամիտ կուսակցութիւնների դէմ,
քարեր է գցում Ֆրիդրիխ կայսրի վրա: Խօսելով
վերջինի մահի մասին, իր քաղաքականութեան
մասին, այդ օրգանը ասում է, որ երկու կայսր-
ների քաղաքականութիւնը միմեանց չէր համա-
պատասխանում: Իշխան Բիսմարկ իր արդէն
յայտնի դեկլարացիան մէջ մինչև անգամ մեղադրել
է Ֆրիդրիխի պետական դաւաճանութեան մէջ:
Բիսմարկի խօսքերով, վերջին կայսրը մինչև ան-
գամ այն ժամանակվայ թագաւորանպիսի հեռու
էր պահում պետական նշանաւոր գործերից, ո-
րովհետեւ նա վարկենում էր, որ չը լինի թէ
նա հաղորդէ անգլիական կառավարութեան կա-
րուր գաղտնիքներ, իսկ անգլիական կառավա-
րութիւնը այն ժամանակ շատ բարեկամ էր Ֆրե-
րանսիային:

Բացի այդ բոլորից իշխան Բիսմարկի օրգանը
ի միջի այլոց յայտնում է, որ վերջին առաջինի
և Ֆրիդրիխի մէջ դեռ 1863 թականին մեծ տա-
րածայնութիւններ եղան: Առաջ այդ տարածայ-
նութիւնները արտայայտվում էին ներքին քաղա-
քականութեան հարցերում, քանի որ վերջինը ա-
ռաջինը հետում էր խիստ-պահպանողական ուղ-
ղութեան, իսկ Ֆրիդրիխը ազատամիտ ուղղու-
թեան. բայց յետոյ այդ տարածայնութիւնները
երևան եկան և արտաքին քաղաքականութեան
մէջ: Պատմելով մի շարք ուրիշ բաներ, իշխան
Բիսմարկի օրգանը յայտնում է, որ Գերմանիային
մեծ վտանգ էր սպառնում, եթէ Ֆրիդրիխ ձգդ-
տումները լիութիւն ստանային, իսկ այդ վը-

որ համաձայն չեն այդ մտքերի հետ: Սակայն
«անձնաւորութիւնների» համար գոյութիւն ունե-
ցող այդ օրգանները բանակուր են սկսում այն
ժամանակ, երբ դիցուք «Մշակը» յարձակվում
կամ խօսում է այնպիսի անձնաւորութիւնների և
հիմնարկութիւնների վրա, որոնք այսպէս թէ
անպէս կապ ունեն մեր մամուլի այդ օրգանների
խմբագիրների, կամ խմբագիրների խնամքների և
կուսակիցների հետ:

Մի քանի ապացոյցներ կը բերենք. «Արձագա-
նք» բանակուր սկսեց «Մշակի» հետ ֆանդիսից
եկեղեցու երեցփոխի հարցի առիթով: Ինչու, որով-
հետեւ այդ երեցփոխը անձնական բարեկամութիւն
ունի պ. Գովհաննիսեանի հետ, որը միշտ ուրիշ
երեցփոխանական հարցերի ժամանակ լռել է:

«Արձագանքը» կուր սկսեց «Մշակի» հետ, երբ
սա, Ներսիսեան դպրոցի բոլոր հարցաքննութիւն-
ների մասին հաշիւ տալով՝ հաշիւ տուեց և հա-
յոց գրականութեան հարցաքննութեան մասին:
Հայոց գրականութեան վերաբերեալ նկատողու-
թեան առիթով, որ տպվեց «Մշակի» մէջ, պ.
Գովհաննիսեան անպիսի հայտնակուր (և ոչ բա-
նակուր) սկսեց, որովհետեւ այդ առարկայի վար-
ժապետը (ո՞հն պ. Քարաման) բարեկամ է պ.
Գովհաննիսեանին, թէ ևս այդ նոյն պ. Գովհան-
նիսեան մի խօսք անգամ չասեց միւս վարժա-
պետների վերաբերմամբ:

Մի ուրիշ օրինակ. «Արձագանքը» կուր սկսեց
«Մշակի» հետ պ. Արախանեանի բողոքի առի-
թով, որովհետեւ այդ դէպքում պ. Արախանեանի
անձնաւորութիւնը կապ ունէր պ. Գովհաննիսեա-
նի հետ: Բէգնադարեանի խնդրի պատճառով
իսկ այդ նոյն պ. Գովհաննիսեանի միջոց լռել է,
երբ իրօք հալածվել, նեղվել են անարդար կերպով
ուրիշ շատ արժանաւոր վարժապետներ և վար-
ժապետներ....

տանգաւոր ձգտումներն առաջն առաւ, երկայնիկ կանցքերն օրգանի խօսքերով, միայն իշխան Բիւսմարկի:

Թէ որքան արժէք ունի գերմանացոյ կանցքերն ինքնազոլութիւնը իր սեփական օրգանութեամբ, և թէ որքան ազնիւ բան է այդպէս վերաբերվել դէպքի հանգուցեալ թագաւորի յիշատակը, որը իր 99 օրվայ թագաւորութեան կարճատև միջոցում արդէն ցոյց տուցի իր հինական և համակրելի դատաւարներին ինչ լինելը, այդ ինքն ըստ ինքեան հակադասելի է Հասկանալի է մանաւանդ այն պատճառով, որ իշխան Բիւսմարկ իր գործունէութեան ընթացքում ամեն տեսակ միջոցներ ներկայի է համարել իր նպատակներին հասնելու համար:

Երևում է, որ իշխան Բիւսմարկի մեղադրանքները դէպի Ֆրիդրիխ կայսրը՝ լաւ տպագրութիւնն է թողել, և այդ պատճառով նա նորանոր բացատրութիւններ է տալիս ազատամիտ կուսակցութիւններին իր օրգանի միջոցով: Բայց անօգուտ է այդ. պատմական ճիշդ տեղեկութիւնները արդէն յայտնի են, յայտնի են, թէ ինչ էր Ֆրիդրիխ, ինչ էր ուղում նա, յայտնի են վերջապէս թէ ինչ է Բիւսմարկի քաղաքականութիւնը: Իզուր է աշխատում իշխան Բիւսմարկի օրգանը աղաւաղել պատմական փաստերը: Ոչ որ պատմութեան հետ ծանօթանալու համար չի դիմում իշխան Բիւսմարկի օրգանի կողմնապահ յօդուածներին, ճշմարտութիւնը իմանալու համար կան աւելի ճիշդ և աւելի անկողմնապահ աղբիւրներ, իսկ այդ աղբիւրներից ստացված տեղեկութիւնները արդէն պարզել են երկայնիկ կանցքերի քաղաքականութեան ինչ լինելը:

ՏԵԼԵԳՐԱԳՐԱԿԱՆ ԹԻԻՒՆՆԵՐ ԹԻԻՒՆՆԵՐ ԹԻԻՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Արտասահմանի հայոց լրագրներին գրում են հետեւեալը. «Արտաստիպի կողմերում հռչակաւոր Միհր Ալի առաջակապի եղբայրն և իւր ընկերները 10 օր յառաջ դիշերանց կը յարձակին Թուրքիա գաւառակի Մանիշլըք գիւղի անտառի հանքէն Աստուր քէնիայի ոչխարների հօտին վրայ և հովիւներէն մին սպաննելով, միւսներն ալ վիրաւորելով, վայրագօրէն կը բողբոռն ոչխարներն, անոնց մէկ մասին բուրդը կը խուզեն, մէկ քանիներն մէջքէն դարձնելով կը կարտեն ու կը տորներն այս ու այնտեղ կը ցրեն ի նշան իրենց վայրագութեան և մնացած մի քանի հարկու ոչխարներն ալ կը քնին կը տանին: Թիւրքերը»

Եւ այդպիսի մանր-մունր անձնական բաների համար կուր և զգուշացալ՝ սկսող «Արձագանքը» միշտ լռել է, երբ «Մշակը» յարուցել է ուրիշ մեծ, ընդհանուր խնդիրներ, երբ նոյն իսկ հասարակութեան մէջ, ամեն տեղ և ամեն շրջաններում ահագին աղմուկներ են բարձրացել «Մշակի» գրածներին առթիւ: Եւ «Արձագանքը», որը այդպիսի դէպքերում պէտք է խօսէր, իբրեւ լիբերալ ներկայ դրութեան համակրող, և պէտք է ցոյց տար իր «պատկաւաւոր» գրողների ամբողջ ոյժը (?) այդպիսի դէպքերում միշտ լռել է, և շատ շատ, ամիսներ անցնելուց յետոյ՝ իրան յատուկ խեղճատակ ձեւերով և մի երկու բառով ցոյց է տուել որ համամիտ է «Մշակին»:

Դա առ նուազն ցոյց է տալիս, որ «Արձագանքը» չէ հետաքրքրվում մի ընդհանուր հարցով, մինչև որ հարցը «անձնական» հետաքրքրութիւն չունի իր համար...:

Մենք այն համոզմունքն ենք, որ երկու միմեանց հակառակ բանակի պատկանող օրգանների մէջ բանակուել մղելը շատ և շատ օգտակար է: Կանոնաւոր բանակուելը կարող է հասարակութեան համար մեծ հարցերից շատերը պարզել:

Բայց բանակուել ենք ասում, և ոչ թէ «հայտնաբերել» և խեղճատակութիւններ, որոնք այնքան սովորական են դարձել, և որոնցից այնքան զգուշ է ինքը հասարակութիւնը:

Հէնց որ լրագրներին մէջ որ և է հարցի առթիւ ընդհանուր և սկզբում, հասարակութիւնը սկսում է արտաբերել «չղբայր, փող ենք տալիս, որ հայտնաբերել կարգենք», ասում է ամեն բան փողի տեսակետից դատող հայ ընթերցողը:

Եւ նա չէ սխալվում, որովհետեւ այդ բանակութիւնները մեծ մասամբ ոչ այլ ինչ են, եթէ ոչ հայտնաբերել, և ընթերցողին ոչինչ մտաւոր սը-

կառավարութիւնը դեռ չէ գտած և կը վնասէ այդ շարագործներ պատժելու համար Այս առաջին անգամը չէ որ Միհր Ալի խումբը սարսափելի չարքներ կը գործէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ալիքանայի հեռագրում են, որ այնտեղի կիսապաշտօնական լրագրներում երևացած յօդուածները, որոնք խօսում են Ռուսաստանի սպառազորութիւնների մասին, մի առանձին աղմուկ չը հանցին և առանձին տպագրութիւն չը թողնին:

—Արքիպիան Նատալիա թագուհու հաւատարմատարների հրատարակած տեղեկութիւնները երևում է, որ դեռ սրանից մի քանի ամիս առաջ թագուհին խնդրել էր Միլան թագաւորի հետ հաշտվելու մասին, բայց վերջինը մնաւ արմատի վրէ:

—Փարիզից եկած տեղեկութիւնները երևում է, որ մօտեւա Ֆրանսիական նախագահ Կարնո ուղում է ուղևորվել Ալժիր:

—Անգլիան և խալիսան, ինչպէս գրում են Հոմմից, դեռ անցեալ տարի ներքին—քաղաքական դաշն են կապել, և այդ դաշնակցութիւնը իսկապէս կողմնակի կերպով կապում է Անգլիան երեք պետութիւնների դաշնակցութեան հետ:

—Հոկտեմբերի 10/22-ին Լոնդոնի դատարանում սկսվեց «Times» լրագրի և պարնէլականները գործը, որի մասին մենք հաղորդել ենք մի քանի անգամ: Միմեանք թիւններ մեր լրագրի անցեալ համարներում:

—Բէլգրադից հեռագրում են, որ մակեդոնական հարցի մասին կազմվող ժողովները արգելվում են կառավարութեան կողմից:

—Սօֆիայից գրում են, որ միլիտարներ խորհուրդ մի շարք օրինադներ է պատրաստում աղաղակով ժողովին ներկայացնելու համար, որոնք զինաւորացիներ վերաբերում են երկրի տնտեսական դրութեան բարելոքելուն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՈՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 հոկտեմբերի: Կայսերական պալատի միմտորը հեռագրում է. «Կուրսկ-Խարկովի երկաթուղու վրա, Բորկա կայարանում, կայսերական գնացքում բեւեմների իջան երկրորդը, չողմուքներն և նրա ետեւից կապած»

նուռը չը տուղ անմոռութիւններ: Դրա ապացոյց էր ուղում Ապացոյց թող լինի այն բոլորը, ինչ որ վերջին ամիսների ընթացքում գրում է «Արձագանքը» «Մշակին» հետ ունեցած բանակութիւնների առթիւ: Եւ այդ ընթացքում, ոչինչ օգնութիւն չը ստանալով իր «պատկաւաւոր» աշխատակիցներից, և ոչինչ էլ յոյս չունենալով «Արձագանքի» էջերը հնազանդական և գրագրական յօդուածներով ընդունողներից, և չը դիմանալով այն փաստերին, որ իր մասին հրատարակ են դուրս բերում իր հակառակորդները, պ. Արգար Գովանիսիսան գրել է վերջնում, և գրում է այնպիսի այլաբանական և անհեղինակ խաչատուրակութիւններ, ինչպէս են «Արձագանքի» № 22 մէջ տպած ֆելիետօնը, այլ և այն հայտնաբերելը, որոնք սկսվել են դրանից էլ առաջ և շարունակվել են մինչև «Արձագանքի» վերջին համարը...:

Իսկ փչացած և անելի էլ վատ ինտելիկետներով վարակված ընթերցողը կարգաւոր այդպիսի խաչատուրակութիւններ, փողոցային հայտնաբերել, և «կուրսկներ» ճաշարաններին յատուկ խեղճատակութիւններ, ծիծաղել երեսին ասում է. «համաշխիս է, հա...»

Այդպէս է եղել երէկ, այդպէս է լինում այսօր, այդպէս կը լինի և վաղը, քանի որ մեր մուրի դեկալանները կը լինեն այնպիսի անձինք, ինչպէս է պ. Գովանիսիսան և tutti quanti, որը, ինչքան էլ զղիւղ ունեցող և յայտնի մարդ լինէր, բայց իբրեւ խմբագիր, իբրեւ հրատարակիչ, և իբրեւ գրող օրինակելի ոչինչ չունի...:

Ուրեմն ասացեք, ինչպիսի ենք, ինչ կարող է ուսուցանել ժողովրդին այդպիսի մամուլը— ոչինչ:

Ինչ կրթող և բարոյականացող ներգործութիւն կարող է ունենալ հասարակութեան վրա այդ տեսակ օրգանը,— ոչինչ:

չորս վազոնները: Գոհութիւն Աստուծոյ, Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհին, Թագաւորուհուհուհու, Մեծ Խլխանները, Մեծ Խլխանուհիները և թիկնապահ խմբի բոլոր անդամները միանգամայն անշնչաւ մնացին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 հոկտեմբերի: Պետերբուրգում ձիւն հալվում է. Նիժնի-Նովոգորոդի մօտ ամբողջ Վոլգան սառցապատ է:

ԱՌԷՆԻ, 18 հոկտեմբերի: Երէկ այստեղ հասան Մեծ Խլխաններ Սերգէյ և Պաւլէ Ալէքսանդրովիչներ, և Մեծ Խլխանուհի Եկատարինա Ֆեօդորովնա:

ԲԵՐԼԻՆ, 18 հոկտեմբերի: Վիլհելմ կայսրը երէկ այցելեց Համբուրգ և վերադարձին անցաւ իշխան Բիւսմարկի մօտ Ֆրիդրիխսթէյն:

ԼԻՒ, 18 հոկտեմբերի: Միշին Աֆրիկա դնացած յայտնի ճանապարհորդ Ստէնլին վայրենիները մորթել են:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 հոկտեմբերի: Կայսերական պալատի միմտորը հեռագրում է, հոկտեմբերի 18-ից. «Նոյա կայսերական Մեծութիւնները, Թագաւորուհու և Թագաւորական ամբողջ ընտանիքը բարեկալով կերպով անցան Գոլիսկայա կայարանով: Այսօր խալիսէլեան մայր եկեղեցում մաղթանք կատարվեց Նոյա կայսերական Մեծութիւնների վտանգից ազատվելու պատճառով: Երէկ գոհացողական մաղթանքներ կատարվեցան զանազան հիմնարկութիւնների եկեղեցիներում: Թատրոններում, ներկայացուցներ սկսելուց առաջ մի քանի անգամ կատարվեցաւ ժողովրդական օրհներգը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 հոկտեմբերի: Կայսերական Պալատի միմտորը հեռագրում է. «Տարանովկա կայսրանից դուրս եկած կայսերական գնացքը հոկտեմբերի 17-ի կէսօրին, կործանվեց Տարանովկա և Բորկա կայարանների մէջ եղած տարածութիւնից 277 վրստի վրա, բաւական խոր ձորակով անցնող մի թումբով: Կործանման ժամանակ, Նոյա Մեծութիւնները ամբողջ Օդեսսափառ ընտանիքի հետ և սկիտայի անձինքը նախաձեռնում էին սեղանատան վազոնում: Առաջին վազոնի երկաթուղու գծից իջնելու ժամանակ սարսափելի ցնցիւն պատահեց: Հետեւեալ վազոնները վայր ընկան երկու կողմերի վրա, սեղանատան վազոնը, թէպէտ և մնաց գծի վրա, բայց տնձանաչելի էր, ամբողջ հիմքը անկենդանի դուրս են ընկել. պատճառը տափակացան և միայն առաստաղը, մի կողմի վրա ծովից, ծածկեց վազոնում գտնվողներին: Անկարելի էր երևակայել, թէ որ և է մէկը կարողանար կենդանի մնալ այդպիսի կործանման ժամանակ. բայց Տէր Աստուծոյ»

Ինչ հարցեր կարող են մշակվել այդպիսի օրգանների մէջ, ինչ դադափարներ նրանք կարող են արժանանալ,— ոչինչ:

Ապա ուրեմն ծիծաղելի չէ, որ այդպիսի մարդիկ վեր են կենում և հրապարակով խօսում են «Իդէալներ» և «ազգի ծառայողներ» մասին, ծիծաղելի չէ, կրկնում ենք, երբ այդպիսի օրգանները և հրապարակախօսները խօսում են հասարակութեան հետ «Իդէալների» մասին...:

Այդ աւելի էլ ցաւալի է, քան թէ ծիծաղելի, որովհետեւ դրանով ոտի տակ է տրվում և հասարակական գործունէութեան դադափարը և մամուլի անուրը...:

Նախընթաց խօսքերի տխուր տպագրութեան տակ էլ ուղում ենք վերջացնել մեր ակնարկները: Խոստովանում ենք, որ մենք երկարացրինք և անելի գրեցինք, քան թէ արժէք գրել «Արձագանքի», նրա պ. խմբագրի և նրա արքայաների մասին, բայց եթէ մենք վճռեցինք այդքան գրել, այդ միայն յանուն հայ մամուլի, և յանուն այն «փողոցի իդէալների», որոնք հինգ այժմ, շատ տարիներ անցնելուց յետոյ էլ խաղաղ են դարձել մեր ազգային փառանքին, բուրժուաների ձեռքում, և մենք միանգամայն դժուր է լինել, եթէ ընթերցողը կարդալով մեր ակնարկները կը համոզվի, որ այդ բոլոր գրելու մէջ, մի գրողը անձնական և կուսակցական նշող դրոշմներ չեն եղել. մենք միայն փաստեր բերեցինք, թողնելով իրան հասարակութեանը վերջնական եզրակացութիւն դուրս բերել պ. Արգար Գովանիսիսանի, նրա օրգանի, նրա կողմնակիցների մասին, չը խաղվելով այն շացնող դիմաւորներից, որոնցով «Արձագանքի» հրատարակիչը դիտէ ծածկել թէ իրան և թէ իւրաքինիներին...:

պահպանեց Թագաւորին և Նրա Ընտանիքը: Վազոնի բեկորներից դուրս եկան անշնչաւ Նոյա Մեծութիւնները և Օդեսսափառ երկաթուղու վրակցան և այն բոլոր անձինքը, որոնք գտնվում էին այդ վազոնում, ստանալով միայն թեթեւ վէրքեր, բացի Ֆիլիքս-ադիւտանտ Շերէմետովից, որը ուրիշներից աւելի վնասվեց, բայց ոչ ծանր: Գոհադաբար, գնացքի մնացած շարքված մասերի կործանումը դժբաղդ հետևանքներ ունեցաւ. սպանված են՝ Ֆելդ-եգերման կորպուսի շտաբ-կապիտան Բրէշ, բժշկի օգնական Չէկուվէր, դրաղի Շերմէրդ, սպասաւոր Լաուտեր, երկու ձիադնացներ, մի կամէր-կաղակ, մէկ եգէր: Գնացքի ծառաներից սպանված են երկու փականագործներ, երկու կոնդուկտորներ, մի պատասխանագործ, և երկաթուղային զորագնդի 6 զինուորներ: 18 հոգի են վիրաւորված. բարձր Շերմէլ սաստիկ հարուած է ստացել Թագաւորը բարեհաճեց անձամբ դեկալարել վիրաւորվածներին օգնութիւն հասցնելու կազմակերպութիւնը: Չը նայելով սաստիկ վնաս եղանակին, անձերին և ցեխին, Նորին Մեծութիւնը մի քանի անգամ իջաւ զառիվարի վրայով դէպի սպանվածները և վիրաւորվածները և կործանման տեղը բերել տուած սկիտայի վազոնում նստեց այն ժամանակ միայն, երբ վերջին վիրաւորվածը փոխադրվեցաւ առողջապահական գնացքը: Վիրաւորվածները խաղաղ ուղարկվեցան գնեւթաւ-մայր Մարտինովի ուղեկցութեամբ, իսկ գնդապետ Վէրնէտ թողնված է կործանման տեղը սպանվածների դիակները ուղարկելու և շարքված վազոններից մնացած առարկաները ժողովելու կարգադրութիւններն աւելու համար: Թագաւորը հրամայեց սպանվածների նշխարները փոխադրել Պետերբուրգ և հող տանել նրանց ընտանիքներն ապահովելու համար: ճանապարհի խափանման պատճառով սկիտային յատկացրած գնացքը Նոյա Մեծութիւններով և Օդեսսափառ Ընտանիքով ուղևորվեց շարժման համար Եկատարինեան գծով դէպի Լոյովո կայարանը: Այդ կայարանում Բարձրագոյն հրամանով հրաւիրված գիւղական հոգևորականութիւնը Բարձրագոյն ներկայութեամբ հողեհանդիստ կատարեց դժբաղդ դէպքից վախճանված զոհերի համար և՛ գոհացողական մաղթանք ամեն ժամանակ հրաշքով ազատվելու պատճառով: Ժամատացութիւնը վերջացնելուց յետոյ՝ Թագաւորը հրաւիրեց գնացքում բոլոր գտնվողներին, որոնց թիւում և ծառաներին կայարանի դահլիճը ուշացած ձախիս ֆինուկները կը պարզէ գնացքի կործանման ճիշտ պատճառը:

Դուք, «տան և չորս տարի աղղին ծառայելուց և իդէալներ իրագործելուց» յետոյ սկսել էք երազել «դափններով պսակվելու» մասին (տես «Արձագանք» № 23): Գնդիցիլ ցնորներ... Երազեք, ապագան ցոյց կը տայ, թէ ինչ դափնեալ պսակներ են դրանք... Բայց մի ուսուցեք, որ այդ ապագան ձերը չէ. ձեր անցեալը, ձեր «տան և չորս տարի ծառայութիւնը» հետք չէ թողել. հետք չի թողնի և ձեր ապագան Ձեր ամբողջ փառքը, անուրը և հուշակ ներկայի մէջն է, քանի որ դուք ինքներդ կաք և ապրում էք: Ձեզանից յետոյ այդ փառքը, անուրը և հուշակը օդը կը ցնդի, ինչպէս եթէ: Ուրեմն թող փչեցեք, շացեք, և ուրախացեք, որքան կարող էք: Ձեր յիշատակը «Փորձի» և «Արձագանքի» մեռած թղթերի վրա տպած «խմբագիր-հրատարակիչ» տիտղոսն է, որի վրա հինվելով կարող էք բացականչել բանաստեղծի լեզուով. «Я памятникъ себѣ воздвигъ бумажный»:

Մենք վերջացրինք: Մենք ասեցինք, ինչ որ պէտք է ասեինք. այժմ հայտնեցեք, որքան կամենում էք, վիրաւորեցեք որքան ոյժ ունեք:

Մենք պատրաստ ենք կրկին անգամ բանակուել պատշաճաւոր կերպով. մենք միշտ պատրաստ ենք հրապարակ դուրս գալ, եթէ մեր հակառակորդները բանակուել նիւթը կը լինեն ընդհանուր հարցեր, դադափարներ և իդէալներ: Բայց հայտնաբերել, ինքնապատկութիւններին մենք կը պատասխանենք,— միայն լուրջեամբ և խորին արհամարհանքով...:

Խ. Մ.

